ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 2-ին, կիրակի.—Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն).

Այսօր, օրվա հանդիսավոր տոնի առիթով, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հայրապետական ս. պատարագ է մատուցում Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով հասնում է Երևանի Մայր եկեղեցի, ուր Նրան դիմավորում և ողջունում է Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը՝ շրջապատված քահանա հայրերով և թեմական խորհրդի անդամներով:

Ս. պատարագի ընթացքում, «Հայր մեր»-ից առաջ, օրվա խորհրդի առթիվ, հոգեշունչ քարոզ է խոսում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ վեր հանելով Հոգեգալստյան տոնի նշանակությունը քրիստոնյա եկեղեցու կյանքում և այդ տոնի ուսուցողականը՝ հայ ժողովրդի համար:

Ս. պատարագի ավարտին, ի պատիվ Նորին Ս. Օծության, Երևանի առաջնորդարանում կատարվում է հյուրասիրություն:

*
* *

Նույն օրը Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում հավուր պատշաճի:

*
* *

Հունիսի 8-ին, շաբաթ.—Այսօր հոգևոր ճեմարանում ավարտվում են 1973—1974 ուսումնական տարվա ամավերջի քննությունները:

*
* *

Հունիսի 9-ին, կիրակի.—Ա կիրակի զկնի Հոգեգալստեան: Սկիզբն Յարութեան կիրակէից: Յիշատակ Եղիայի մարգարէին.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան վրդ. Բալիոզյանը:

«Հայր մեր»-ից առաջ, Հոգեգալստյան տոնի կապակցությամբ, իմաստալից քարոզ է խոսում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Վերջում Նորին Սրբությունը ողջունում է ներկայությունը Մայր տաճարում ստամբուլահայ, երուսաղեմահայ և ամերիկահայ ուխտավորների ու օրհնում նրանց պանդուխտ եղբայրներին:

*
* *

Հունիսի 10-ին, երկուշաբթի.—Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց.

Այսօր ս. Հռիփսիմե տաճարում պատարագ է մատուցում ս. Հռիփսիմե վանքի վանահայր տ. Եղիշե քհն. Բաղրամյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ս. Հռիփսիմե կույսի կյանքի և նահատակության հոգևոր նշանակության մասին:

Ս. պատարագին ներկա է լինում Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ

Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում են հոգևոր ճեմարանի սաները:

* * *

Հունիսի 11-ին, երեքշաբթի.—Սրբոց կուսանացն Գայիանեանց.

Այսօր ս. Գայանե տաճարում պատարագ է մատուցում ս. Գայանե վանքի վանահայր տ. Գուրգեն քհն. Աշուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ս. Գայանե կույսի կյանքի և նահատակության մասին:

Ս. պատարագին ներկա է լինում Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում են հոգևոր ճեմարանի սաները:

* * *

Հունիսի 13-ին, հինգշաբթի.—Տօն սրբոյն Յովհաննու Կարապետին եւ Աթանագինեայ եպիսկոպոսին.

Այսօր ս. Շողակաթ տաճարում պատարագ է մատուցում ս. Շողակաթ վանքի վանահայր տ. Միքայել քհն. Թեմուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում է ս. Հռիփսիմյանց կույսերի նահատակության մասին:

Ս. պատարագին ներկա է լինում Մայր Աթոռի միաբանությունը:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում են հոգևոր ճեմարանի սաները:

* * *

Հունիսի 15-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի վիրապէն.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը:

* * *

Հունիսի 16-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Հոգեգալստեան: Տօն կաթուղիկէ ս. Էջմիածնի.

Օրվա հանդիսավոր տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Ժամը 11-ին, եկեղեցական մեծաշուք թափորով, Նորին Սրբությունը առաջնորդվում է Մայր տաճար:

Սկսվում է ս. պատարագը՝ ներկայությամբ ուխտավորների խուռներամ բազմության:

«Հայր մեր»-ից առաջ ս. Էջմիածնի դերի և նշանակության մասին բովանդակալից քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի, մեծաշուք հանդիսադրությամբ, կատարվում է Հայրապետական մաղթանք:

* * *

Հունիսի 23-ին, կիրակի.—Գ կիրակի զկնի Հոգեգալստեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը:

* * *

Հունիսի 26-ին, չորեքշաբթի.—Այսօր հյուրաբար Մայր Աթոռ է ժամանում ռուս պրավոսլավ եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Ս. Բուևսկին՝ իր տիկնոջ հետ:

* * *

Հունիսի 27-ին, հինգշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում իտալահայ համայնքի հոգևոր հովիվ տ. Զգոն եպս. Տեր-Հակոբյանը և Միլանի հայ եկեղեցու վարչության ատենապետ դոկտ. Տիգրան Ալեքսանյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ: